

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

1956 թ. ապրիլի 10-ին և 12-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիրեկցիայի և պարտիական կազմակերպության նախաձեռնությամբ հրավիրվեց Լրկրորդ սեմինար պարապմունքը, նվիրված «Ռուսական օրինատացիայի ծագման հարցի շուրջը» թեմային:

Զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Վ. Կ. Ոսկանյանը: Ընկ. Ոսկանյանը կանգ է առնում, այն փաստի վրա, որ Իսրայել Օրին ներկայացավ 1701 թ. հունիսի 30-ին Սմոլենսկ, իսկ հուլիսի 7-ին՝ Մոսկվա, բանակցություններ սկսելով ռուսական կառավարության ներկայացուցիչների հետ: Օրին հայտնեց, որ Անդեղակոթում հավաքված հայավագանու գաղտնի ժողովը (1699 թ.) որոշել է գիմել Ռուսաստանին և նրա օգնությունը հայցել՝ պարսկական լուծը թոթափելու և Հայաստանն ազատագրելու նպատակով նախապատրաստվող պայքարում: Բանակցությունների ընթացքում Օրին հայտնեց նաև, որ նման մի ժողով գումարվել էր 1678 թ. էջմիածնում, և որ ներկայացուցիչներ էին ուղարկվել Ռուսաստան ու եվրոպական այլ Լրկրներ՝ հայ ժողովրդի ազատագրության հարցը բարձրացնելու համար:

Իսրայել Օրու գործունեության վերաբերյալ փաստաթղթերի բավական սովոր ժողովածու կազմող և ուսումնասիրող պատմաբան Կ. Եզովը լառաջ բուռեց այն դրույթը, որ Իսրայել Օրու գործունեության շրջանից սկսած հայ ժողովրդի ազատագրության գործը անդառնալիորեն կապվեց Ռուսաստանի օգնության հետ: Եզովի հրապարակած նյութերը ընդլայնեցին պատմագրության հետաքրքրությունների շրջանակները և ակնառու դարձրին հայերի պատմական բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ:

Հասարակական-քաղաքական միտքը բնության առարկա դարձրեց այն հարցը, թե երբ և ինչպես է հայությունը կողմնորոշվում դեպի Ռուսաստան: Այդ խնդրի շուրջը գրվեցին մեծ ու փոքր աշխատություններ, սկսվեցին վեճեր, սակայն չի կարելի ասել, թե պատմագրությունը մշակեց որոշակի ու բոլորի կողմից ընդունելի կարծիք: Եթե հայերի դեպի Ռուսաստան կողմնորոշվելու փաստը և նրա պրոգրեսիվ ու փրկարար նշանակությունը կասկածներ չի հարուցում, ապա նրա ժամանակի հարցը (ներան առնչվող մի քանի խնդիրների հետ) մինչև օրս էլ մնում են վեճերի առարկա և կարոտ են գիտական լուսաբանության:

Նախ պետք է ճշտել, ընդգծում է ընկ. Ոսկանյանը, հայերի ռուսական օրինատացիայի արտահայտության իմաստը, պայմանավորվել ու որոշել դրա ծավալն ու խորությունը: Հայտնի է, որ ռուսական օրինատացիա հասկացությունը և արտահայտությունը պատմագիտական գրականության մեջ օրինականություն ստացավ Ա. Գ. Հովհաննիսյանի «Հայ-ռուսական օրինատացիայի ծագման խնդիրը» աշխատության հրապարակումով (էջմիածին, 1921 թ.): Ա. Գ. Հովհաննիսյանի, ինչպես և այդ հարցին հետազայում անդրադարձող պատմաբանների մոտ ռուսական օրինատացիա արտահայտությունը գործարկվում է Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ծրագրի իմաստով: Մենք էլ կարծում ենք, որ ռուսական օրինատացիայի նման ըմբռնումը ճիշտ է և օգնում է հարցի զրկվածքում որոշակիություն ստեղծելուն: Սակայն մեզ մոտ հաճախ ռուսական օրինատացիայի կողքին գործածվում են նաև եվրոպական, պարսկական, թուրքական օրինատացիա արտահայտությունները, որոնք անորոշություն են մտցնում գիտական տերմինաբանության մեջ և խանգարում հասկացությունների ճշտմանը:

Եթե մենք ընդունենք, որ ռուսական օրինատացիան դա պետականությունից զրկված և օտար լծի դեմ պայքարող հայ ժողովրդի ձգտումն էր ազատագրվել իր հզոր հարևանի՝ Ռուսաստանի օգնությամբ, ապա մենք չենք կարող խոսել, ոչ թուրքական և ոչ էլ պարսկական օրինատացիայի մասին: Թեպետ պատմական տարրեր շրջաններում հայ իշխող դասերը և նրանց ներկայացնող գործիչները գիմել են արևմտանվրոպական այս կամ այն պետությանը կամ

կոալիցիային, սակայն դրանք եղել են Հպիզոզիկ, մասնակի և շեն եղել հայ ժողովրդի ազատագրական ձգտումների և հավատի արտահայտություն: Պարզ է, որ ազատագրական պայքարում Ռուսաստանից տեական օգնություն և հովանավորություն ստանալու ծրագիրը՝ հայերի ռուսական օրիննտացիան չպետք է դնել հավասար մակարդակի վրա այս կամ այն պետության հետ քաղաքական գործարքի մեջ մտնելու և անդամ օգնություն հայցելու առանձին փաստերի հետ:

Առավել ևս անիմաստ է խոսել այս կամ այն իշխող դասերի՝ Թյուրքիային կամ Պարսկաստանին ենթարկվելը, նրանց հետ լեզու գտնելը, Թյուրքիայի կամ Պարսկաստանի օրիննտացիա համարելը (այս դեպքում մենք կարող ենք խոսել Թյուրքաֆիլության, պարսկաֆիլության մասին): Մեր կարծիքով, 17—19-րդ դարերի ազատագրական պայքարում միակ ունակ, օրյեկտիվ պայմաններից բխող և փաստորեն գոյություն ունեցող ու հնարավոր ժողովրդական օրիննտացիա, դա ռուսական օրիննտացիան էր, որ պատմականորեն աճել ու ամրապնդվել էր հայոց ժողովուրդների դարավոր հարաբերությունների, բարեկամության, փոխըմբռնման ամուր ու օրյեկտիվ հիմքի վրա:

Մյուս խնդիրը՝ դա ռուսական օրիննտացիայի գենեզիսի, նրա ծագման ու ամրապնդման ժամանակի հարցն է, որը մինչև վերջերս վեճի առարկա է: Մոսկվայի Հին Ակտերի կենտրոնական Պետական Արխիվի ֆոնդերում եղած նյութերը, ինչպես և այլ տպագիր և անտպագիր վկայությունները մեզ բերել են այն համոզման, որ հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները սկիզբ են առել 16—17-րդ դարերում և ձևավորվել որպես Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու մշտական համոզմունք, ձգտում, ծրագիր 17-րդ դարի երկրորդ կեսին:

Այս եզրակացությունը մենք կփորձենք ապացուցել մեզ հայտնի դարձած մի քանի փաստերով, որոնք պետք է ժխտեն ռուսական օրիննտացիայի 18-րդ դարում (և ի. Օրու կողմից) տեղեկվելու վերաբերյալ մինչև այժմ ընդհանուր քաղաքացիական իրավունք ստացած դրույթը:

Իր ղեկուցման վերջում ընկ. Ոսկանյանը տվեց հարցի պատմության ակնարկը, վեր հանելով այն արդյունավետն ու դրականը, որ նպաստել է խնդրի քննարկմանը, ինչպես և այն սխալները, որոնք մինչև այժմ լիովին շեն հաղթահարված և հաճախ վերապրուկների ձևով տեղ են գտնում մեր գրականության մեջ:

Չեկուցումից հետո տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակություն: Պատմական գիտությունների թեկնածու Ա. Միրզոյանը իր ելույթում կանգ առավ հայ-ռուսական օրիննտացիայի հետևյալ էտապների վրա:

Առաջին էտապ. 9-րդ դարի վերջից մինչև 13-րդ դարը. այս շրջանում հայերը ռուսների հետ ունեին միայն առևտրական կապեր:

Երկրորդ էտապը. ընկ. Միրզոյանը համարում է 13-րդ դարի վերջերից մինչև 16-րդ դարի կեսերը. այդ ժամանակաշրջանում ստեղծվում են նոր քաղաքական պայմաններ թե Ռուսաստանի և թե հայերի համար:

Այս էտապում մինչև Իվան Երրորդ թագավորը Ռուսաստանը ուժեղ պետություն չլինելով և չվարելով ակտիվ արտաքին քաղաքականություն այնքան ունակ չէր կարող հանդիսանալ Անդրկովկասի համար: Իվան Երրորդ թագավորի ժամանակ էլ դրությունը դեռևս բարելավված չէր, և այս շրջանում խոսել նույնպես հայ-ռուսական օրիննտացիայի մասին չի կարելի, բանի որ դեռևս կային միայն առևտրական և տնտեսական կապեր:

Երրորդ էտապը ընդգրկում է 16-րդ դարի կեսերից մինչև 17-րդ դարի 70-ական թվականները: Այս շրջանում ռուսական բազմազգ պետությունը բավական հզորացել էր, արմատախիլ էին արվել կենտրոնախույս ուժերը, Ռուսաստանը արևելքում արդեն հայտնի էր, որպես խոշոր պետություն: Ահա այս շրջանում Անդրկովկասի ժողովուրդները ավելի ունակ հույսեր են կապում Ռուսաստանի հետ, ուժեղանում են առևտրական, կուլտուրական կապերը, որոնք հիմք են հանդիսանում հետագա քաղաքական կապերի համար:

Չորրորդ էտապը պետք է համարել 1670-ական թվականներից մինչև 1722 թ. ազատագրական շարժումը: Այս շրջանում հանդես են դալիս մի շարք նոր երևույթներ (Էջմիածնի գաղտնի ժողով, 1699 թ. Անգեղակոթի ժողովը), սրանք հայ ժողովրդի կամքը արտահայտող երևույթներ են, որը և պետք է համարել հայ ժողովրդի օրիննտացիայի ծագման սկիզբը:

18-րդ դարում, երբ հանդես է դալիս Իսրայիլ Օրին, այս ժամանակ արդեն այդ օրիննտացիայի զարգացման ժամանակաշրջանն է, որը միաժամանակ պետք է համարել ռուսական համաժողովրդական օրիննտացիա, շնայած, որ հայ ժողովրդի մեջ կային մարդիկ, որոնք պաշտպանում էին պարսկական և Թյուրքական օրիննտացիաները:

Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Արրահամյանը իր ելույթում նշեց, որ ընկ. Ոսկանյանը շատ ճիշտ բնորոշեց օրինենտացիայի հարցը, այն համարելով ոչ թե որպես հայ-ռուսական օրինենտացիա, այլ ռուսական օրինենտացիայի ծագման հարց:

Ճիշտ դրվեց հարցը նաև այն տեսակետից, որ օրինենտացիայի խնդիրը առաջ է քաշվել ո՞ր թե առանձին անձնավորությունների կողմից, այլ հիմնականում ժողովրդի կողմից:

Ընկ. Արրահամյանը չի համաձայնվում պատմաբանների այն հարցադրման հետ, թե իբր հայկական եկեղեցին ռուսական օրինենտացիա չի ունեցել, նրա կարծիքով դա սխալ է, քանի որ նույնիսկ Միմեոն կաթողիկոսը, որը իբր պարսկական օրինենտացիա ուներ, դարձյալ հատուկ պատգամավորություն է ուղարկում Եկատերինա 2-րդ թագուհու մոտ:

Ճիշտ գնահատելով ժողովրդի դերը, չպետք է թերագնահատել անհատ գործիչների դերը: Ընկ. Արրահամյանը համամիտ չէ գեկուցողի այն թեզին, որ Իսրայել Օրին խոշոր դեր չի կատարել հայ-ռուսական հարաբերություններում, քանի որ ինչպես Իսրայել Օրին, նույնպես և Մինաս վարդապետը եղել են հայ-ռուսական հարաբերությունների խոշոր գործիչները:

Պատմական գիտ. դոկտոր-պրոֆեսոր Մ. Աղայանը կանգ առավ հայ ժողովրդի, որպես ազգ ձևավորվելու հարցի վրա, նա ասաց, որ պատմական իրողությունն այն է, որ հայ ժողովուրդը որպես ազգ ձևավորվել է 19-րդ դարում՝ բարձրացող բուրժուազիայի հետ միասին: Հասկանալի է, որ նրա էլիմենտները սկսում են զարգանալ ավելի վաղ շրջանից, բայց որպես նոր որակ, նա հանդես է գալիս 19-րդ դարում, ընկ. Ոսկանյանը գտնում է, որ հայ ազգը սկսել է ձևավորվել 16—17-րդ դարերում: Համենայն դեպս այդ հարցը հիմնավորման կարիք ունի:

Պարզ չէր նաև այն, թե ինչու գեկուցողը ռուսական օրինենտացիայի իդեոլոգ է համարում միայն բուրժուազիային:

Ռուսական օրինենտացիայի հարցը չպետք է կապել հայ բուրժուազիայի կամ թե առանձին դասերի հետ, օրինենտացիայի հարցը պետք է կապել ամբողջ ժողովրդի հետ:

Իր ելույթում պատմական դիս.ությունների դոկտոր-պրոֆեսոր Պ. Հարությունյանը ցանկություն հայտնեց, որ ընկ. Վ. Ոսկանյանը կատարեց մի քանի վավերագրերի վերլուծություն. օրինակ՝ 1699 թ. Անգեղակոթի ժողովի կազմած անդրանիկ վավերագրերը ուղղված Պետրոս I-ին, ապա նույն թվականի երկրորդ վավերագիրը, ուղղված Վիլհելմ Կուրֆյուրստին և Պետրոս I-ին:

Օրինենտացիան որպես քաղաքական երևույթ գոյություն է ունեցել բոլոր ժամանակաշրջաններում և միշտ հանդես է եկել ու զարգացել, առաջին հերթին տիրող դասակարգի ղեկավար դասի շրջանում և ոչ թե գյուղական խրճիթում: Պատահական չէ, որ էջմիածնի կամ Անգեղակոթի ժողովներն էին. որ պետք է վարեն ղեկավարության և քաղաքական հարաբերությունները:

Պատմական գիտ. թեկնածու Ա. Համբարյանը իր ելույթում հարցադրման կարգով ասաց, որ ռուսական օրինենտացիայի ստեղծման պատմությունը նկարագրելիս, պետք էր համոզեցուցի: Կերպով ցույց տրվեց, թե ինչպես այդ օրինենտացիայի լայն գաղափարը սկզբում վերնախավի շրջանում առաջացավ և հետզհետե հասավ ժողովրդակույն լայն մասսաներին:

Ազգությունների ձևավորման մասին արտահայտվեց պատմական գիտ. դոկտոր Բ. Առաքելյանը, նա ասաց, որ այդ պրոցեսը երկարատև պրոցես է, որի մասին ժամանակին խոսել են մարքսիզմի կլասիկները:

Ֆ. էնգելսը խոսելով եվրոպական մի շարք երկրների մասին, գտնում էր, որ այդ երկրներում ազգությունների ձևավորումը կատարվել է 15—16-րդ դարերում. այստեղից կարելի է եզրակացնել, որ ազգությունների ձևավորումը կապվում է բուրժուական արտադրական հարաբերությունների առաջացման հետ և նրա սկիզբը չի կարելի կապել կապիտալիստական ֆորմացիայի հանդես գալու հետ: Հիմնականում ազգությունների ձևավորումը պետք է կապել համազգային շուկայի գոյացման հետ: Այդ տեսակետից Հայաստանի պատմությունը յուրահասու է, քանի որ նա չի ունեցել համազգային շուկա, այլ միայն համազգային շուկայի համար որոշ առանձնահատկություններ էին հանդես եկել դեռևս 17-րդ դարից: Առանձնահատկություններ, որոնք բնութագրական էին համազգային շուկայի առաջացման, այնպես էլ ազգի սկզբնավորման ժամանակաշրջանում, իսկ ավելի ուշ՝ ազգի ձևավորման համար:

Հիմնական հարցերից մեկը պետք է համարել այն, որ եթե ազգը ուշ է ձևավորվել, ապա արդյո՞ք մինչ այդ եղած ժողովրդական շարժումները կարճի է անվանել ազգային-ազատագրական շարժումներ:

Քուրժուական բնույթը հայկական ազատագրական շարժման մեջ մտնում է միայն 18-րդ դարից սկսած, կապված բուրժուազիայի զարգացման հետ, իսկ մինչև այդ կային ժողովրդատառագրական շարժումներ, որոնց մասնակցում էր և՛ ժողովուրդը, և՛ եկեղեցին, և՛ իշխանները, բայց գլխավորում էին վերջին երկու դասերը:

Պետք է առաջ քաշել նաև եվրոպական օրիննտացիայի հարցը: Մեր ժողովրդի տարբերներկայացուցիչներ շատ դուներ են բախել, օգնություն խնդրելու համար. դրանք եղել են ժողովրդի այս կամ այն խմբի առանձին անհատների կողմից ազատագրման միջոցի որոնումներ և դեզերումներ, իսկ ժողովրդական օրիննտացիան հիմնականում եղել է ռուսական, քանի որ օրիննտացիայի առաջացման համար հող և բարենպաստ պայմաններ ստեղծվեցին այդ դեզերումներից ավելի ուշ, միայն հզոր Ռուսաստանի հարևանության և նրա ունի օգնության հնարավորության շնորհիվ:

Ելույթ ունեցան նաև պատմական գիտությունների թեկնածուներ Ս. Շևր-Ավակիմովան, Վ. Մելիքսեթյանը և ասպիրանտ Ս. Հարությունյանը:

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ